ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՄԱՆ

"20" դեկտեմբերի 2024 թվական N 857-Ա

ք. Երևան

«ԷԿՈԱՏՈՄ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի և 2-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 698-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 26-րդ կետի 10-րդ ենթակետը՝

Հաշվի առնելով

Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) և «ԷԿՈԱՏՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) (ՀՎՀՀ՝ 01805162, գործունեության հասցե՝ քաղաք Երևան, Ադանայի 1, 0082) միջև 2019 թվականի դեկտեմբերի 10-ին կնքված թիվ «ԲՏԱՆ-ՄԱԱՇՁԲ-19-17» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը հանդիսացող թիվ 1 հավելվածով ներկայացված գնման ժամանակացույց-տեխնիկական բնութագրի համաձայն՝ Ընկերությունը պարտավոր էր սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել «Գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական» աշխատանքներ:

Համաձայն պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի՝ ընկերությունը պետք է մինչև 20.09.2021 թվականը հանձներ երկրորդ փուլի և մինչև 14.12.2021 թվականը՝ երրորդ փուլի արդյունքները, որոնք փաստացի չեն կատարվել:

Նախարարությունը, ղեկավարվելով 2019 թվականի դեկտեմբերի 10-ին կնքված թիվ «ԲՏԱՆ-ՄԱԱՇՁԲ-19-17» գնման պայմանագրի 2.1.5-րդ կետի ա) և բ) ենթակետերով, և Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով՝ 2024 թվականի դեկտեմբերի 18-ից միակողմանի մասնակի լուծել է պայմանագիրը:

Հիմք ընդունելով, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, այն է՝ «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄԵՄ՝

1.«ԷԿՈԱՏՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում 2 /երկու/ տարի ժամկետով:

2. Սույն հրամանը հրապարակվելու հաջորդ օրը տրամադրել լիազորված մարմնին (Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը)՝ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

12/20/2024

X

ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Signed by: GASPARYAN DAVIT 1407810154

ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ